

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆԻՍՏՐԱԿՏԻ ՏՈՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրութեամբ են տնօրէնի խմբագրատուն մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրէն).

Յայտարարութիւնը ընդունվում է առանձին լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ

Երկրաբան և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց՝

ՆԱՏԱԼԻԱ ԵՍԱՅԵԱՆ ՄԱԴԱԹԵԱՆՑ

որի մասին խորին ցաւով յայտնում են նրա ամուսին Միքայէլ Մադաթեան և զաւակները՝
Մարգարիտ Արիւնանց, Աննա Ղուկասնց, Մարիամ Շիւքանց, Հեղինէ և Տիգրան Մադա-
թեանները. Հոգեհանգիստը ապրիլի 2-ին, երեկոյան ժամը 7-ին, Յուդարկաւորու-
թիւնը հինգշաբթի, ապրիլի 3-ին, առաւօտեան 10 ժամին, սեփական տանից, (Օլգին-
սկայա, № 14) դէպի Մոզմուս. Գեորգ եկեղեցին. Թաղումը Սօլիմանի գերեզմանա-
տանը.

1—2

ԹԱՎԱՆԻԱՆԻՑԻՆ

Թատրոնական թեմը գաւառական քաղաք-
ներում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Օտար կեան-
քից և գրականութիւնից. Նամակ Կարսից.
Նամակ Ներսիսից. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Նա-
մակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—Հն-
դաստիարակ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱՅԱՆ.—Հայ իտալիզացիները.

ԲԱՏՐՈՆԱԿԱՆ ԲԵՄ ԳԱՆԱՆԱԿԱՆ ԳԱ- ՆԱԿՆԵՐՈՒՄ

Թիֆլիսից և Բագուից մեր դերասանա-
կան խմբերը ցրվեցին գաւառները ներկա-
յացումներ տալու համար։ Այն պիտիները,
որոնք խաղաղվեցին Թիֆլիսում և Բագ-
ուում, պէտք է սեփականութիւն դառնան
և գաւառական հանդիսականի համար։
Անկասկած՝ գաւառում դեռ չեն կարող
ներկայացումներ տեղի ունենալ մեծ թւով
և այն յարմարութիւններով, որոնք որ
կան կենտրոնական քաղաքներում, բայց
եղած ներկայացումները կամաց-կամաց
ստիպում են, որ գաւառական քաղաքներն
ևս նախ թատրոնի վրա, իբրև կրթական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԻՆՏԵԼԻԳԵՆՏԻԱՆ

Այս վերնագիրն ունի «ԲԱԿՍ» լրագրի № 73-ի
բանաստիճական բաժնում տպված մի ուշադրա-
յարժան, որի հեղինակն է այդ լրագրի գլխա-
ւոր աշխատակից պ. Ստարցիկը։ Մեզ համար
հին, բայց և միշտ նոր է այն հարցը, որ ար-
ծարծվում է այդ յօդուածի մէջ. դա այն է, թէ
որքան պարտաւանդ է հայ ինտելիգենցիան
դէպի իր ժողովուրդը Անկախութեան, հետաքր-
քրական են մի առաջնապարականութիւն կար-
ծիքները այդ հարցի մասին։ Եւ մենք, որ երե-
ւան տարիներից ի վեր հայ ինտելիգենցիայի
պակասութիւններն ենք մերկայացրել, չենք կարող
մեր խօսքը չափել պ. Ստարցիկին։
Նախ մի փոքրիկ տեղեկութիւն այն մասին,
թէ ինչ առիթից է օգտվել պ. Ստարցիկը այդ
յօդուածը գրելու համար։

Առիթը տուել է Մշակը։ Գիտէ՞ք արդէն որ
Պետերբուրգի մի խումբ հայ ուսանողներ մի
նամակ էին տպել Մշակին դէմ. ի՞նչ տպաւո-
րութիւն թողեց այդ նամակը։ Խղճուկ ֆրագ-
ների տպաւորութիւն։ Այդ են վկայում այն
նամակները, որոնք ստացվեցան Մշակին խմբ-
ագրութեան մէջ։ Բաւական է որ մի քանի
ուսանողներ երկուստեք թիւին խօսէ յա-
նուն գիտութեան և հասարակական չափերի, և
հաւ ընթերցողները դրա մէջ մի լաւ առիթ են
գտնում իրանց դժգոհութիւնը յայտնելու։ Դուք
դեռ խօսում էք, այս են առում ստացված նա-
մակները. խօսում էք, երբ ինքներդ ոչինչ չէ-
անում, երբ ձեռքանից ոչինչ օգտու չէ ստանում
ձեր հասարակութիւնը։

Մեր ուսանողները առաջին անգամ չեն ըսում
այսպիսի կշամբանքներ։ Մշակին էլ երբ եր-

միջոցներից մէկի վրա և հոգ տանեն նրա
նպատակաւորումը և կանոնաւոր կազմա-
կերպութեան վրա։

Գաւառական քաղաքներում գոյութիւն
ունեն յատուկ թատրոնական շինութիւն-
ներ և ներկայացումները տրվում են մեծ
գահիքներում, որոնք յարմարեցվում են
բեմի համար։ Յատուկ թատրոն գոյու-
թիւն ունէ միայն Շուշուում։ Մի քանի տա-
րի սրանից առաջ կար թատրոնական մըշ-
տական թեմ Թելաւում, հիմնված բարե-
գործական ընկերութեան ջանքերով։ Ու-
րիշ քաղաքներում եղել են փոքր բեմ
հիմնելու, որոնք մնացել են սակայն միայն
իբրև տեսչանքներ։

Ներկայումս յատուկ թատրոնական բեմ
չկան և Ալեքսանդրապոլ քաղաքը, որ ար-
դէն ձեռնարկել է գործի և մի քանի ամ-
սից յետոյ արդէն պէտք է կարող լինի
տալ դերասանական խմբերին կանոնաւոր
ներկայացումների համար։ Որքան մեզ
յայտնի է, ամառվայ վերջին և յետոյ
ձմեռվայ ընթացքում այդ նոր բեմի վրա
պէտք է տեղի ունենան կանոնաւոր հա-
յերէն ներկայացումներ, որոնք համար ար-
դէն լուրջ պատրաստութիւններ են տեսն-
վում։

Կար և երկար տարիներ լինէն են եղել այսպիսի
դժգոհութիւններով, յարձակումներով։ Այժմ մի
նոր առիթ էր ներկայացնում Այժմ էլ երևում
էր նոր սպասող, ակնկալութիւններով լցված
բայց յուսախաբութեան և հիասթափման մէջ
ընկած հասարակութիւնը։

Այդպիսի մի բողոք, 17 հոգու ստորագրու-
թեամբ, ուղարկվում է եղել «ԲԱԿՍ»-ի խմբ-
ագրութեան։ Պ. Ստարցիկը չէ կարողացել ամ-
բողովին բերել այդ նամակը, որի մէջ, ինչ-
պէս նա է ասում, զերմապէս պաշտպանված է
Մշակը։ Մի քանի կտորներ միայն ցոյց են
տալիս թէ ինչ են գրել 17 բողոքողները։

Վերա, պարոններ, մատը մատին չէք խփում
ձեր հարազատ ժողովրդի համար և միայն
զուարճանում էք ողորմելի, ճղճան բառերով.
միշտ դուք վերջին տասնամակում չէք
տուել մեզ մի հատիկ գրականագէտ անգամ,
թէ կուղ չնորձից գրկվածի մէկը։ Չէք տուել
այն պատճառով, որ ձեզ չէ յուզում ձեր հա-
րազատ ժողովրդի վրէժները։ Դուք և մենք—
միմեանց համար խորթ ենք։

Ան այս մեղադրանքների առիթով է պ.
Ստարցիկը գրել իր յօդուածը. ի՞նչ է նա ա-
սում։

Նախ և առաջ ընդունում է, որ դանդաղները
անհիմն չեն, որ Երևոյթը ճիշտ է ըմբռնված
ձիւղ է. այս, որ հայ ինտելիգենցիան ոչինչ չէ
արել և չէ անում հայ գիւղի համար։ Չը կայ
մի դէպք, որ ցոյց տայ թէ հայաբնակ գիւղը
որ և է օգուտ ստացած լինի հայ ինտելիգեն-
տից։ Գիւղական ժողովուրդը և ինտելիգենցիա
սրանք գոյութիւն չունեն իրար համար։ Այս
մտքով հայկական ինտելիգենցիա չը կայ էր։

Նորից և նորից հաստատելով որ այս բողոքը
ճիշտ է միանգամայն, պ. Ստարցիկը առաջ է
անցնում և օգուտ է ապացուցանել որ մեղա-
ւորը ինտելիգենցիան է, այլ այն, որ կան
հասկալի պատճառներ։ Ինտելիգենցիան միջոց,
հասարակութիւն չունի գործելու. նա ոչ դրա-
միջոցներ կարող է բաց անել, ոչ գրադարաններ,
ոչ էլ դաստիարակութիւններ կարող է կազմա-
կերպել։ Ասում էք թէ ինտելիգենցիան գիւղը
պիտի գնալ, բայց ի՞նչ պիտի անէ նա անտեղ
Մի ժամանակ էլ ողա ինտելիգենցիան էր գնում
գիւղերը, գրագիտութիւն էր սովորեցնում երե-
ւաններին, լուծողական էր տալիս վատ կերտ-
կից փորը ուղարկւած գիւղացուն, բայց յետոյ
պիտի անտեղ ինտելիգենցիան և աւելորդ է այդ-
պիսի աշխատանքները. ի՞նչ անէ գիւղում բը-
ծիլը, փաստաբանը, ինժեները։

Այսպէս, ուրեմն, ինտելիգենցիան ոչինչ մեզ
չունի, որ իր ժողովրդի համար մի խորթ տարր
է մնում։ Մեղաւորը հանգամանքներն են
հայ, բացի դրանից, և մի այլ հարց։ 17 հո-
գու նամակում մէջ արտայայտված է և այն գաւա-
ղացու, որ ուսանողները և առաստաղ ինտե-
լիգենցիա հայերը չեն գրում հայերէն, գրեք ու
լրագիրներ չեն հրատարակում։ Այստեղ պ.
Ստարցիկը ասում է որ կարևոր էլ չէ որ հայ
ինտելիգենցիան անպատճառ հայերէն գրէ։ Ընդ-
հանուր առաւական ինտելիգենցիան գործում է
բոլոր ժողովուրդների համար. հայ ինտելիգեն-
ցիան կարող է աւելի օգտակար լինել իր ժո-
ղովրդին, գրելով ուսուցիչ. Ամբողջ հայ ժո-
ղովրդի համար ուսուցիչ լրագիրները աւելի կա-
րևոր են, քան հայ լրագիրները։ Պահանջելով
որ հայ ինտելիգենցիան միայն հայերէն գրէ,
մենք չենք գնալ դէպի ազգայնական առանձ-
նացումը։ Ուրեմն, թուրքերը, լեւները, հայե-
րը հաւաքվել ենք, մի բնամիտ ենք կազմել.
աւելի լաւ է աշխատել մերոյ ընտանիքի
համար, բաժանաբաժան չը լինելով, չը ստեղծե-
լով մեզ համար առանձնակի նպատակներ։

Ի վերջոյ պ. Ստարցիկը հաւատացնում է, որ
հայ ինտելիգենցիան չափ լաւ է հասկանում իր
պարտաւորութիւնները, հաւատացնում է որ
17 հոգին լաւ են նկատել երևոյթը, բայց չեն
հասկացել երևոյթի իսկական պատճառը, որ
միանգամայն ընկալում է և արդարացի

Ալեքսանդրապոլը բաւական մեծ ազգա-
բնակութիւն ունի, որ կարող է խելացի
և կրթական զուարճութեան. նա մի և
նոյն ժամանակ իր կազմութեամբ բաւա-
կան միապաղաղ մի մասսա է, որի պա-
հաններին կարելի է միշտ յարմարել
կարճ ժամանակամիջոցում։ Անկասկած-
անհրաժեշտ է, որ թատրոնը լինի մատ-
չել՝ ժողովրդի մեծամասնութեանը, չը
պատճառելով նրան նիւթական չափա-
զանց ծանրութիւն, որի պատճառով նա
ստիպված լինի կամ բոլորովին չայցելել
թատրոնը կամ այցելել թատրոնը դէպքե-
րում։ Այն ժամանակ թատրոնը կը դառ-
նայ մենաշնորհ սակաւթիւ ունեւոր-
ների համար։ Սակայն յոյս կայ, որ
այդ սխալը տեղի չունենայ Ալեքսանդրա-
պոլում, որովհետեւ թատրոնը չիմուծ է
քաղաքի հաշուով, իսկ քաղաքը չի ունենալ
չափազանցական նպատակներ մի այնպիսի
հիմնարկութեան վերաբերութեամբ, որի
համար ուրիշ տեղերում քաղաքային վար-
չութիւնները կամ պետութիւնը տալիս
են իրանց կողմից օժանդակութիւններ.
Վերջապէս ներկայացումների մի մասը
կարելի է յատկացնել թատրոնական ֆոնդ
կազմելու համար, որպէս զի ապահովված
լինեն նրա ապագայ կազմակերպութիւնը
և յարատեւ գործունէութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՕՏԱՐ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՆԻՑ

III

Ետում է հասարակական կեանքը արտասա-
նանում և այդ ետում հասանքից յետ չէ մնում
նաև իրական սեռը—կանայք։

Բաղմաթիւ են հրատապ հարցերը Եւրոպայի
ընթացիկ կեանքում և այդ հարցերի շարքում
աւելի ու աւելի խոշոր տեղ է գրաւում կա-
նանց շարժումը։

Թօթափել դարձւոր ստրկութեան լուծը,
ցոյց տալ, որ կինն էլ ազամարդու նման մարդ
արարած է և նրա հետ հասարակ իրաւունք
ունի օգտվելու կեանքի ու բնութեան բոլոր
բարիքներից, որ կինն էլ կարող է գործել
բոլոր առարկաներում, մասնակցել հասարա-
կական բոլոր հարցերում—ահա դրանք են
կանանց շարժման գլխաւոր ձգտումները։
Եւ այդ ձգտումները նրանք արտայայտում
են մերթ մամուլի ու գրականութեան միջո-
ցով, մերթ հաւաքական ժողովներում, մերթ
պաշտօնական ինդիւստրիալ։

Այն, գործում են եւրոպացի կանայք և նը-
րանց աշխատանքը ապարդիւն չէ անցնում
նրանք արդէն ունեն այնպիսի իրաւունքներ,
վայելում են այնպիսի բարիքներ, որոնց մա-
սին հայ կինը երևակայել անգամ չէ կարող։

Բայց եղածով չը բաւականաւորով, նրանք
դիմում են միշտ դէպի առաջ, միշտ դէպի
լայն նպատակներ։ Ուստի և նրանց շարժումը
չափ անգամ ընդհանրվում է հակառակ հոսանք-
ների հետ, հանդիպում է ուժեղ արգելքների։

Ահա մի այնպիսի ընդհանրում է, որ վերջին
երկու տարիների ընթացքում շարժումակ ան-
սխառութիւններ է պատճառում գերմանացի
կանայք։ Պա քաղաքական բնաւորութիւն ու-
նեցող ժողովներին մասնակցելու հարցն է։

Գերմանական օրէնքով կանայք իրաւունք
ունեն ամեն տեսակ ժողովներ կազմելու, ա-
մեն տեսակ հարցեր քննելու—բացի քաղաքա-
կան հարցերից։ Բայց քանի որ դժուար է ու
բոլոր տարբերութիւններն ընկն քաղաքական և միւս
հարցերի մէջ, ուստի շարժումակ թիւրիմացու-
թիւններ են առաջ գալիս. թիւրիմացութիւն
ներ, որտեղ ամենամեծ դերը կատարում է
ուստիկանութեան քանակաւորը։

Ահա այդպիսի թիւրիմացութիւնների առաջն
առնելու համար էր, որ անցեալ տարի ներքին
գործերի մինիստր Համբուրգում հրատարակեց
մի նոր օրէնք, որով թոյլատրւում է կանանց
մասնակցելու նաև քաղաքական ժողովներին,

Պատմելով յօդուածի բովանդակութիւնը,
մենք մեզ թոյլ կը տանք մի քանի նկատողու-
թիւններ անել։

Նախ և առաջ շատ անաղոգ է անկախ հան-
գամանքները օգնութեան կանչելու Ոչ ոք չէ
պահանջել և երբեք չի պահանջել, որ հայ ինտե-
լիգենցիան Հէրբուրգէ հանդիսանայ, անհրաժեշտ
հարաւոր դարձնէ Ոչ. Պահանջներ անողները
միշտ ի նկատի ունեցել են և ունեն մեր կեան-
քի պայմանները։ Ասել թէ այդ պայմանների
մէջ ոչինչ չէ կարելի անել նշանակում է ծու-
լութիւնն ու անկարողութիւնը բառերով վա-
րագրել։ Հէնց պ. Ստարցիկի շարքը, Բագ-
ուում, խմբված է քաղաքից հայ ինտելիգեն-
ցիա։ Երբ հարկաւ որ է նաւթային մի ընկերու-
թիւն կազմել, այդ ինտելիգենցիան կարողա-
նում է թէ ետանդ, թէ դրամական միջոցներ
գտնել։ Բայց նոյն այդ ինտելիգենցիան արժէ
փորձ ընդհանուր հաւաքական, ընկերական ոչ-
փորձ մի կուտորական գործ սկսել Եւրոպա-
գաւառի գիւղերում։ Զք որ այդ գաւառը Բա-
գուի ինտելիգենցիայի քնթի տակ է գտնվում
Փորձէին գտնէ Մատթասայի, Բարբաղի, Գիւր-
ջիվանի, Սաղեանի գիւղերգործութիւնը դարգաց-
նել, կատարելագործել. փորձէին գտնէ երկու-
երեք գիւղում երկրագործութիւնը ազատել
նահապետական գործիքներից և հասկացողու-
թիւններից։ Արեւ են մի բան. Ուր են նրանց
տարածած հնձող ու կալտող մեքենաները, ուր
են նրանց օրինակելի ագարակները։

Բերենք մի ուրիշ օրինակ. Կովկասեան Գիւ-
ղատնտեսական Ընկերութիւնը յօթարութեամբ
թոյլ է տալիս իր բաժանմունքները բանալ
գաւառական քաղաքներում։ Արդէն քանի՞ ձիւ-
ղեր ունի ընկերութիւնը, ինչո՞ւ մեր երկիրը
չէ ծածկվում այդ ձիւղերի քանցով։ Մեզ յայտ-
նի են երկու ձիւղ միայն—Գանձակում և Երե-
ւանում։ Ահա գործելու առաջադէպ. Բայց կան
գործողներ, կան հետաքրքրվողներ. Գանձակի
և Երևանի ինտելիգենցիան ինչ է արել մինչև

Այսինքն Յովնանեանից 5 ր. և պ. Ղևոնդ Յակոբեանից—10 ր.:

Կիրակի, մարտի 30-ին, երեկոյան Բաթու-մից Թիֆլիս հասան 120 հոգի գերմանացի տուրիստներ, որոնց մէջ կան գերմանացիներ և անգլիացիներ հարուստ զասակարգից: Նրանք ինքնանցին «Օրիանտ», «Վէտցէ» և «Վոնդոն» հիւրանոցներում: Մարտի 4-ին ճանապարհ ընկնելով Համբուրգից՝ այդ տուրիստները այցելել են Նիւ-Եօրկ, ապա Իտալիայի, Կ. Պօլսի, Տրապիզոնի վրայով անցել են Բաթում: Թիֆլիսում տուրիստները ուսումնասիրում են առաւելագոյն քաղաքի հին թաղերը և գնում են տեղական արհեստաւորների ընդող իրեր և տնայնագործութեան արդիւնքները: Ի միջի այլոց նրանք Թիֆլիսում այցելեցին բուսանիական այգին, Մուշապոյի, Կովկաս-սեան մուգէյը և հնուաբարձութեամբ նայեցին պատմական թանգարանում գտնվող պատկերները, որոնց մէջ նրանց աւելի զբաղեցնում էին կովկասեան պատերազմների տեսարանները: Այսօր, ապրիլի 2-ին, գերմանացի տուրիստները ճանապարհ կընկնեն դէպի Բաթում, ապա տեղից Կիրի, Իտալիա և ապա՝ Անգլիա: Նրանց ճանապարհորդութիւնը, ինչպէս նաև ամերիկացիների անցեալ տարվայ ճանապարհորդութիւնը, կազմակերպել է Կուկի յայտնի անգլիական ընկերութիւնը:

Մեզ հաղորդում են, որ Չառտի երեքսորթի օրը, ապրիլի 8-ին, դերասան Արմէնեան կը տայ վրաց ազնւականութեան թատրոնում մի ներկայացում հայ դերասանական խմբի անդամների հետ: Կը ներկայացվի Օթիէի Պարոն Պուարթի փառանք պիեսը, չորս գործողութեանով: Պ. Արմէնեան ամառվայ ընթացքում պէտք է տայ ներկայացումներ Հիւսիսային Կովկասում և Հարաւային Ռուսաստանի քաղաքներում:

Թիֆլիսի չքաւորներին բաժանելու համար ստացանք Գանձակից—8. Բալ-ից 3 րուբլի:

Տիրապալի եպիսկոպոս քարոս է. Յովնէր-Բօպպ, մարաքաղաքի լրագիրների խօսքով, Պետերբուրգից ճանապարհ ընկաւ ներկայ մարտի 23-ին Նորին սրբազնութիւնը այցելեց մարաքաղաք՝ վերջնականապէս վճռելու համար Օղէսայի ազգաբնակչութեան յարուցած հարցը՝ եպիսկոպոսական աթոռը Սարաուսից Օղէսա տեղափոխելու մասին: Պէտք է նկատել, որ տիրապալիս թիւին միջ մասամբ բաղկացած է գերմանացի կոլոնիստներից, որոնք յայտնի են իրանց հարստութեամբ Ռուս-

ստանի հին ընդհանուր զարգացուցիչ գրքերը, որ միայն հայերէն կարդացող բանասերի հասկացողութիւնները համարեա նոյնն են, ինչ անգրագետ բանասերներին:

Խնչ ցուալի, դժբաղդ փաստ: Մարդը տա-րիներով գրագիրութիւն է օգտուել, բայց անգրագետ է դարձել: Եւ միթէ պէտք է աղպէս էլ հաշտվել իրողութեան հետ, միթէ պէտք է թոյլ տալ, որ բերաւոր մարդիկ այդպէս անգրագետ էլ մնան: Յանձնաժողովը թւեր է հաւաքել, իրողութիւնն է վաւերացրել, իսկ հայերը գիտեն, թէ ինչու են իրանք անգրագետ: Պատճառը պարզ է. ոչ ոք չէ մասնում անգրագետների մասին. հարիւրաւոր իրաւաբաններ, պատմագէտներ, ընագէտներ, ինժե-ներներ, քիմիկոսներ, գիւղատնտեսներ ունենք, բայց օգուտ չենք տեսնում նրանցից: Իսկ դուք ասում էք, թէ իրաւունք չունէք գանգատվելու ինտելիգենցիայից... Սա նշանակում է, թէ մէկը իրաւունք չունի ողջալու իր օգիտութիւնը, իր յետաձգողութիւնը, իրաւունք չունի հրապարակով յայտնելու, որ ինքը հաց է խնդրում, բայց իրան քար են տալիս, ձուկ է խնդրում, բայց օձ են տալիս: Խնչ արդարութիւն է աս:

Չորրորդ դարում մի հայ մարդ, Պրոյերե-սիոնը, Աթէնքում այնքան հռչակվեց իր գիտ-նականութեամբ, որ նրա պատուին արձան էլ կանգնեցին: Դա մի գեղեցիկ օրինակ էր թէ ինչպէս կարելի է ծառայել համամարդկային առաջադիմութեան: Բայց այն աղբը, որ ծը-նունդ էր տուել այդ աննման հոգեօրին, Ա-սիայի խաւարում նստած՝ ոչ գիր ունէր, ոչ գիտութեան նշոյլ անգամ: Եւ միթէ նա չէր կարող սակ իր հոգակաւոր որդուն. «Տես, որ-քան դժբախտ եմ եմ: Ինչ կը լինէր, եթէ քո ունեցած լոյսից մի քիչ էլ քո տանը տարա-ծէիր. չէ որ սրանով էլ դարձեալ կը ծառա-վէիր հանրամարդկային առաջադիմութեան: Եւ միանգամայն հասկանալի չէ այս հոգեբա-

ստատանի հարաւում: Կենց գրանք են շահա-գրգոված վերոյիշեալ նախագիծը աշողեցնելու հարցում: Սակայն այդ նախագիծը հաւանու-թիւն չը գտաւ, որովհետեւ այդ մտադրութիւնը իրագործելուց յետոյ ստիպված պէտք է լի-նէին և կաթօնիկ հոգեւոր անմիջական տեղա-փոխել Օղէսա, որը այժմ գտնվելով Սարաուս-վում, հնարաւորութիւն է տալիս թեմի հիւ-սիսային շրջանի գերմանացի կոլոնիստներին դաստիարակութիւն տալ իրանց զաւակներին:

Ռուսական առևտրին և արդիւնագործու-թեանը նպաստող ընկերութեան մէջ՝ բանաւոր-ներին ապահովագրելու հարցի վերաբերմամբ կազմված մասնաժողովը սկսեց իր պարագ-մունքները: Նա այժմ քննում է բանաւորներին դժբաղդ դէպքերից պարտաւորաբար ապահո-վագրելու հարցը: Իր առաջին նիստում մաս-նաժողովը կարծիք յայտնեց այն մասին, որ գիւղատնտեսական բանաւորներին ևս պէտք է հաշուել այն բանաւորների խումբ, որոնք իրա-ւունք ունեն վարձատրութիւն ստանալու դըժ-բաղդ դէպքերի համար:

Դեմոկրատիկ մեզ գրում են. «Վերքնդարը-նակ պ. Յովնէի Բաղդասարեանը, Դաղստանի նահանգապետի թոյլտուութեամբ, ներկայ թի-մարտի 15-ից տեղումս ժողովրդական գրադա-րան և ընթերցարան է բացել: Սա մի ուրախալի երեւոյթ է ընթերցասէրների համար, որոնք հնարաւորութիւն կունենան իրանց պարագ-ծամբը նուիրելու ընթերցանութեան: Տարե-կան անդամավճարն է երեք ռուբլի:

Սիմֆերոպոլից մեզ գրում են. «Ուրախու-թեամբ հաղորդում եմ, որ տեղիս հայ համայն-քից ընտրված պատգամաւորները մարտի 25-ին ունեցած նիստում որոշեցին՝ հայոց երկ-սեռ դպրոցի հանգուցեալ աւագ ուսուցիչ Մա-նուկ Պապեանի կնոջը փոքր ի չափէ ապահո-վացնելու համար հաղար րուբլի միա-նուագ օժանդակութիւն տալ, որպիսի գումարի մի մասը հասարակութիւնից հանգանակված է արդէն, միւսն էլ հանգանակվելու է և փոխա-րինաբար լրացվելու Սրա հետ միասնական ցանկալի էր, որ հանգուցեալ Պապեանի տեղա-կան բարձրագոյ թարգմանած պիեսներից գտնէ մի երկուսը (արմատաւորներից) հրատարակ-վէին, որով կարծես ազատված կը լինէին նրա աշխատութիւնները»:

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Այսօր, ժամը մօտաւորապէս 8-ին, քաղաքի բազմամարդ փողոցի վրա գտնվող Ց. Շխանցի գրասենեա-կը ներս խուժելով 8 հոգի գինաւորված մար-

նութիւնը Հասկանալի չէ, որ մի ժողովուրդ իր հարազատին դիմէ. ոչ յոյն, ոչ հոռաւի-ցին պիտի գար հայի համար այլուքէն զրո-նելու:

Դարերի մի երկար շարք այսպիսի վիճակ էր բերում առիական այս խեղճ ժողովրդին: Նա ծնում էր տաղանդաւոր մարդիկ, որոնք, սակայն, օտար երկրներ տալ, օտար միջավայ-րում էին ցոյց տալիս իրանց ընդունակաւ-թիւնները, մինչդեռ ինքը այդ ժողովուրդը, նստած էր խաւարի մէջ, մոռացված, թշուա-րի տգիտութեամբ, անօգնական Պատմական ճակատագիրը այսօր էլ խօսում է, այսօր էլ հարկադրում է գանգատվել իր լաւ մարդկան-ցից: Իրաւունք չը կայ:

«Մենք յիմար ենք և աղքատ», ասում էր Պիտերբլը: Եւ ո՞վ պիտի գար այդ յիմարու-թեան և աղքատութեան դէմ կուռելու: միթէ Պրոյերե, միթէ Լուի Բլանը կամ Լաւոսալը Ուլ Որքան էլ ազատամիտ, առաջադիմական ինտելիգենցիան համակուծ լինի ամենազեղե-ցիկ ցանկութեամբ դէպի բոլոր ազգերը, բայց նա չէ կարող ամենքի համար էլ գործել այն պարզ պատճառով, որ նա աւելի յարմարու-թիւն ունի իր ազգի համար գործելու: Որքան էլ բարեկամ լինի պ. Ս. Ստարցեվ կովկասեան բոլոր ազգերին, բայց, կարծում ենք, նա ո-չ ինչ չէ կարող անել և պարտք էլ չի համարի անել, եթէ իմանայ, որ մի ամբողջ տարի մի հայերէն, վրացերէն կամ թուրքերէն գիրք չէ լոյս տեսել իր սիրած ժողովուրդներին մի բան սովորեցնելու համար: Եւ աս հասկանալի է պ. Ս. Ստարցեվը չը պիտի մտածէ այդ մա-սին, այլ հայ, վրացի, թուրք ինտելիգենտը:

Մենք յիմար ենք և աղքատ: Եւ սակայն մեր կողքին, մեզանից ոչ հեռու խեղճ էլ կայ, հա-րատութիւն էր Ուլ պիտի դրանցից վերցնէ և մեզ առաջ ինտելիգենցիան: Եւ երբ նա չէ աս-նում այդ, երբ նա չէ ճանաչում այդ պար-տաւորութիւնը, ինչպէս էք դուք մեր տա-

րիկ, պահանջում են գրամարկը բաց անել և յանձնել ամբողջովին միջի փողոցը, սպառնա-լով հրացաններով և սրերով, որպէս զի ոչ ոք տեղից չը շարժվի: Կառավարիչ հնարաւորու-թիւն չունենալով դիմադրել, կատարում է պա-հանջը: Չարագործները չը բաւականանալով մօտաւորապէս 3000 ռուբլի փողով, վերցնում են կառավարչի ոսկէ ժամացոյցը չլիթայով, հաշուապահի մետաղեայ ժամացոյցը և լուս-հեռանում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻՑ

Բէնդէր-Գեաղ, մարտի 21-ին

Անցեալներում, Աստաբաղ քաղաքում, Կա-պիթ ծովի Բէնդէր-Գեաղ նաւահանգստից մօտ 50 վերստ հեռաւորութեան վրա, մի ցաւալի դէպք պատահեց:

Պարոն կառավարութիւնը, ցանկանալով յի-շեալ քաղաքում մաքսատուն բանալ, ուղար-կում է թէհրանցի մի ոմն հայի՝ Ղուկաս Ղու-կասեան անունով, որպէս կառավարիչ, բայց յարմարութիւն չը լինելուն պատճառով մաք-սատուն չէ բացվում, այնպէս որ յիշեալ Ղու-կասեանը նշանակվում է փոստատան կառա-վարիչ մի պարսիկի փոխարէն:

Մի քանի ժամանակ անցնելուց յետոյ լուր է հասնում տեղի, որ անյայտ չարագործները, թունաւորելով Ղուկասեանին և օգտվելով նրա ուշաթափութիւնից, մի քանի վերքեր են հաս-նում պարսկացիին և կողքերին, բայց բարեբաղ-դարար վիրաւորը մահից ազատվում է. սակայն ռուսաց զինուորական բժիշկ պ. Գալիլիօվ-կու ասելով վերքերը վատագուստ են:

Այդ անպատեհի լուր տեղիս հայ վաճառա-կաններին ցնցեց: Անմիջապէս ժողով կազմելով, անդամներից մէկին պ. Աբէլ Տէր-Չաքարեան-ցին ընտրեցին իրանց կողմից որպէս ներկա-յացուցիչ և ուղարկեցին Աստաբաղ անձամբ մանրամասն տեղեկանալու այդ անպատեհի չարագործութեան մասին:

Այդ դէպքը կապ ունի պարսկին պաշտօնից հեռացնելու և Ղուկասեանին նրա փոխարէն նշանակելու հետ: Վիրաւորը, ուշաթափու-թեան պատճառով չէ յիշում չարագործներին, զեռ որոշ չէ ուղղում խոստովանելու:

Եր. Աւագեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԻՐ

«Spectator» լրագիրը կրկին պնդում է, որ վերջերս, երբ գերմանական Վիլհէլմ կայսրը գտնվում էր Անգլիայում, քննվում էր և հաւա-նական է, որ գրական կերպով վճռվեց անց-

նում ասելու թէ իրաւունք չը կայ այդ ան-պարտաճանաչ մարդկանց դատապարտելու: Լաւ իմացե՛ք—յիմար ու աղքատ ենք մենք: Եւ կայ աւելի մեծ անեղք, աւելի մեծ դժ-բախտութիւն մի ժողովրդի համար:

Վերին աստիճանի անտեղի մի համեմատու-թիւն է, որ ասում է պ. Ստարցեվ ոռու լրա-գրութեան և հայ լրագրութեան մէջ: Նա հարցնում է, որն է կարեւոր հայերի համար—առաջինը թէ երկրորդը:

Մենք էլ կը բերենք մի այսպիսի օրինակ: Լոնդոնում հրատարակվում է աշխարհահռչակ «Times»-ը, իսկ Պարսկաստանի Ուրմիա քա-ղաքում միսթիստների ձեռքով լոյս է հան-վում մի փոքրիկ, խեղճ լրագիր ասորերէն լեզուով: Ամեն մի համեմատութիւն այդ երկու-սի մէջ ծիծաղելի կը լինէր: Բայց զենք մի այսպիսի հարց. ասորի ժողովրդի համար որն է աւելի կարեւոր: Դուք գիտե՛ք, որ ասորի ժողովուրդը «Times» չէ կարդում, չէ կարող օգտվել այդ համաշխարհային լրագրից, և եթէ դուք կամենաք մի որ և է միտք հասկացնել ասորի ժողովրդին, ձեր նամակը «Times»-ի խմբագրութեան չէք ուղարկէ, այլ Ուրմիայի խղճուկ լրագրի խմբագրութեան: Հիմա երե-ւակայեցե՛ք «Times»-ը դադարում է, ոչնչ-նանում է ասորի ժողովրդի համար դա աղէտ չի լինի, մինչդեռ եթէ ոչնչանալ Ուրմիի լրա-գիրը, դա կը լինի մի ահագին զրկանք ժողո-վրդի համար: Ո՞րն է կարեւոր բուն ժողովրդի կրթական և կուլտուրական շահերի տեսակէ-տից: Ինչքանից ասացե՛ք:

Վերադառնալով եւք դարձեալ նոյն կէտին: Ռուսաստանում կան հասարակական գաղա-փարներ, կայ հրապարակախօսութիւն, գի-տութիւն: Այդ բարեքները պիտի վայելէ Ռու-սաստանի ամբողջ ազգաբնակչութիւնը: Ինչ-պէս: Ինտելիգենցիան ստանում է մի ընդհա-նուր կրթութիւն, տիրանում է յայտնի աշ-խարհայեցողութիւնների և ապա գնում է ա-

րիական կառավարութեան մասնակցութիւնը: Բաղդադի երկաթուղու գերմանական ձեռնար-կութեան մէջ: Իբր թէ հիմք կայ ենթագրելու, որ Գերմանիան առկէ է բրիտանական կառա-վարութեան համաձայնութիւնը ապագայում: Բաղդադի երկաթուղով ուղարկելու իր հնդ-կական պօստը, այնպէս որ Անգլիան տարեկան 100,000 ֆունտ ստերլինգի երաշխաւորութիւն կը տայ այդ ծառայութեան համար: Իր ժամա-նակին անգլիական պարլամէնտում հարցապըն-դումներ եղան այդ լուրերի առիթով, բայց ա-ռաջին միտքը յայտնեց, որ այդ լուրերը սուտ են: Այնուամենայնիւ, ինչպէս մասնա-ցոյց է անում «Spectator», Բաղդադի երկա-թուղու մասին նորերս կարգադած դատա-խօսութեան մէջ յայտնի գններով Գոյց փա-շան ասաց, որ Անատոլիական երկաթուղիների գերմանական ընկերութիւնը ազանովեց իր եր-կաթուղային գծերի շարունակութիւնը մինչև Կուէյտ—Պարսից ծոցի վրա՝ ադալթմատիական բանակցութիւններից յետոյ Մեծ-Բրիտանիայի հետ:

—Ինչպէս հեռագրում են. «Königsberger Hartungshe Ztg.» լրագրին, Եօնանէսուր-գում 30,000 ինչդիւրներ են ստացվել Ֆինլան-դացիներից, որոնք թոյլտուութիւն են ինչդրում դաղթելու Տրանսիլաւիան կոլոնիայում:

—Ամերիկական դադային մի հսկայական տրեստ է կազմվում ամբողջ աշխարհիս հա-մար: Այդ ձեռնարկութեան գլուխ են կանգնած ամերիկական արքիմիթիոստէրերը՝ Ջոն Բօկ-ֆէլլէր, Դ. Օ. Միլլը, Անտոնի Բրէդի, Բիլլիքոս, Ա. Բ. Յիլոուէր: Այդ տրեստի հիմնական գրա-մագրուիւր կը լինի 1,000,000,000 զօլլար, կամ 5 միլիարդ ֆրանկ: Ջոն Բօկֆէլլէր յայտնեց, որ ինքը 800,000,000 զօլլարի ակցիաներ կը վերցնէ: Այս օրերս Բիլլիքոս Միացեալ Նա-հանգներից կուղևորվի Պարսից վերջնականապէս իրագործելու համար այդ հսկայական տրեստը:

—Արտասահմանեան լրագիրները գնազան տեղեկութիւններ են հաղորդում հիւսիսային Ալբանիայի ազգաբնակչութեան ընդհանուր ապստամբութեան մասին: Ալբանացի զեղա-պետների ընդհանուր ժողովում վճռված է ա-րինահեղ վրէժ լուծել այն ալբանացիների համար, որոնք սպանվեցին Միտրովիցում թիւրք զօրքերի և ալբանացիների մէջ տեղի ունեցած ընդհարման ժամանակ:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՎՈՒԹԻՒՆԻՑ

31 մարտի

ՄՈՍԿՎԱ Նորին Կայսերական Մեծութիւն-ները սկսեցին կրօնական պահեցողութիւն և պատարագի ժամանակ աղօթում էին պա-լատական «Մնիդեան» եկեղեցում: Ժամառա-ցութիւնը կատարում էր Նորին Մեծութիւն-ների խոստովանալարը—Սանիկիւ:

ՏԵՏԻՆԻԷ: Ելբերֆիլայի մահվան առիթով իշ-խանը ցաւակցական հեռագիր ուղարկեց Թա-գաւոր Կայսերը:

Մեն մէկը իր ազգի մէջ գործելու Տարբերու-թիւն ոռու և լինացի ինտելիգենտի մէջ չէ կարելի անել: Նրանք երկուսն էլ մի և նոյն բանն են քարոզում, բայց տարբեր լեզուե-րով: Հայ լրագիրը միշտ կապված է ոռու մա-մուլի հետ, նա էլ նոյն առաջադիմութեան մտքերն է քարոզում, նա էլ նոյն ընդհանուր հասարակական-պետական հարցերն է չօշա-փում: Թող չը լինի հայերէն խօսող ու գրող ինտելիգենցիա և մի ամբողջ ժողովուրդ կոյր ու խուլ կը մնայ:

Սա շատ տարրական ճշմարտութիւն է: Ին-քը, «Bary» լրագիրը մի առանձին սիրով աղ-պագրում է թարգմանութիւններ հայ գրակա-նութիւնից, յօդուածներ հայ գրական գործիչ-ների մասին: Նշանակում է թէ նա կարեւորու-թիւն է տալիս մեր գրականութեան, նշանա-կում է թէ նա ցանկանում է, որ հայոց գրա-կանութիւնը աճէ, զարգանայ: Եւ երբ այսպէս է, ինչու էք հակառակվում, երբ ասում են՝ թէ ինտելիգենցիան իր մայրենի գրականու-թեան չէ ծառայում: Զէ որ առաջը ինտելի-գենցիայի չէ կարող լինի գրականութիւն:

Բայց պ. Ստարցեվ կարծում է, թէ հայ ին-տելիգենտից միայն այն են պահանջում, որ նա գնայ գիւղը և լուծողական ձէթ խմցնէ հիւանդ գիւղացուն: Ոչ, պ. Ստարցեվ, երանի կը լինէր, եթէ այդ լինէր հայ ինտելիգենցիայի պակասութիւնը: Բայց նա քաղաքում էլ մեղք ու անգործունեայ է: Եւ իզուր, շատ իզուր դուք մեղք անակախ հանգամանքների վրա էք գցում: Այն ժամանակ, երբ այդ հանգամանք-ները չը կային, հայ ինտելիգենցիան դարձեալ չէր փայլում իր առանձին առաքինութիւն-ներով:

Ահա որքան ծուռ հասկացողութիւնների և սխալ եղբակացողութիւնների մէջ է ընկել պ. Ստարցեվը: Նա փաստաբանում է, իսկ միջնը՝ «Սալը մերն է, զօրութիւնը մենք գիտենք»... Լ.

Պեկին, Կայսրության-խնամակալություն հրատարակեց մի հրաման, որով զովազանում է իւնգ-լուին և հրամայում է նրան մահից յետոյ նորապիսի պատիւ ու յարգանք տալ, ինչպէս ինքնակալին:

ՊԱՐԻՉԻ Լուսին մարտի 30-ին գնաց Մարսի, որտեղից ուղևորվեց զէպի Ալիբի: Նրան ուղեկցում են Ֆիլիբեր, Դիկասէ և Պելտան:

ԱՔԷՆԻ: Արքունիքում հանդիսարար ճաշկերոյթ կայացաւ: Իշխանը գերմանական պրինց-հերին յանձնեց Փրկչի առաջին կարգի չափ-նշանները:

Արտաքին գործերի մինիստր Սկուզեար աստղագիտական նոր գաղտնագիր Թիւրքիայի հետ:

ՄՕՍԿՎԱ: Նորին Կայսերական Մեծութիւնները Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչի, Նրա Ամուսնու, Մեծ Իշխան Պաւլ Ալեքսանդրովիչի զաւակներին և աւագ ջահանայ Եանի-չեվի ուղեկցութեամբ այցելեցին Արխանգելսկի և Բլազովչինսկի տաճարները:

1 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Կայսերական արքունիքի մինիստր Պետերբուրգ վերադառնալով վերսկսեց իր պաշտօնավարութիւնը:

ՄԱՐՍԷԼ: Այսօր եկաւ Լուսին:

ՊՈԼՍԿ: Նրկ ուսաց դեպքումստան և կեղեցում հոգեհանգիստ կատարվեց Շչերբե-նայի համար: Ներկայ էր զիպլոմատիական մարմինը քաղաքացիական հագուստով:

ՀՐՈՄ: Այսօր բացվեց միջազգային գիւղատնտեսական եօթներորդ համաժողովը: Ներկայ էին թագուորդ, թագուորդ և մինիստրները:

ՄԱՐՍԷԼ: Գաղաքային տանը տեղի ունեցած ընդունելութեան ժամանակ ուսաց հիւպատոսը յայտնեց այն միտքը, թէ բոլոր պետութիւնների հիւպատոսները երկանիկ են, որ կարող են միասնաբար մարտնչելու ռաբառութեանը և ողորակել Լուսինը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բարձրագոյն հաստատված զինուորական խորհրդի որոշման համեմատ ծառայութեան մէջ գտնվող հոսմադաւան ջահանաները և բողոքական քարոզիչները այսուհետև ստանալու են տարեկան ուժեղ 900 ռուբլի, փոխանակ մինչև այժմ սահմանած 366 ռուբլի ուժեղի և 183 ռուբլի սեղանափողի:

Խմբագիր ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱՎԱՔԱՐ
Հրատարակիչներ ԹԱԿՈՒՆԻ ՏԻԳՐԱՆՆԱՆ
ԻՍՍԼԱՄԻ ՄԷԼԻՔ-ԱՆԱՄԱՆՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

(Փոստատարական ծախսերի համար, ԴՆՈՐՑՈ-ՎԱՅԱ ՓՈՒՈՑԻ ՎՐԱ, ԳՈՒՇԿԻՆԱՆ ԱՅԳՈՒ ՀԱՆԻՔ, № 9)

վաճառվում են

Ժամագիրք Հայաստանայի ուրբ և կեղեցւոյ, կաշեկազմ 2 ռ.

Գիրք Սաղմոսաց Դաւթի, կաշեկազմ 80 կ.

Տոնակարգ Հայաստանայի ս. եկեղեցւոյ կազմած 1 ռ. 20 կ.

Գաղափար և արուեստ մոզութեան, Գաղան-ճանի, կազմած 1 ռ. 50 կ.

Հայ աշուղներ, Լեւոնյանի 30 կ.

Քեանարար և Արիւն Կեղեցի, Աղբ Ջիւանու 60 կ.

Աղբ Դարբին Կեղ. հանգրծ երգ., Ջիւանու 40 կ.

Շահ-Իսմայիլի » » » 30 կ.

Մէլիք-Շահի Կեղեցի » » » 25 կ.

Աւանի և Ջիւանի » » » 25 կ.

Քեան Զիւանու, ա. հատար » » » 50 կ.

Քեան-օղլու Կեղեցի, Գիրք-օղլու և Պոլի-Կեղ. հետ պատահած անցքերը—40 կ.

Աղբ-Աղաւթի Կեղեցի, Մալուսեանցի 40 կ.

Դահար-Միրզա և Ջահար-Խանուսի Կեղ. 80 կ.

Մարտի պարտի, Մ. Մարիքեանցի 20 կ.

Մարտիցներ, աշուղական-ժողովրդական երգեր և պարերգեր 80 կ.

Տաղեր և խաղեր, ժողովրդական երգեր և պարերգեր 60 կ.

Միծաղի տողակ և անեկոթա, Շահաղի 50 կ.

Հայ ժողովրդական Կեղեցիներ, Նաւասար-դեանի 50 կ.

Հայ աշուղներ, Գ. Ավարդեանցի, ընտիր թըղ-թի վրա տպած 1 ռ. 50 կ.

Ս. Երգեցողութիւնը առաւօտեան 20 կ.

Անճայի կիթառ, երգիչ Խալաթու 55 կ.

Հազարան-Բլուզ, Յար. Թումանյանի 30 կ.

Թոստոմ և Սարման (ժող. աւանդ.) Բալաս. 25 կ.
Գուրուկ Նահապետի երգերը, 8. Թաղե-նանի 15 կ.

Ճանկացողները կարող են գրքերը ստանալ վերադարձի վճարով, միայն պէտք է ուղարկեն կանխավճար:

Դիմել ԿНИЖНЫЙ магазинъ „Гуттенбергъ“, Г. Галустяну. 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՎՐ

յայտարարում է, որ այս տարվայ ապրիլի 10-ին, առաւօտեան 10 ժամին, Նրա նախագահի ընակարանում (Սուղբենայա փ., № 68), նշանակված է միջոցառում (մատակարարութիւն) 1) երկաթեայ կապի մաս 2000 պուլ, 2) կտուրի համար երկաթեայ թիթեղներ մաս 5000 պուլ, 3) կտուրի համար տուր մաս 2000 ջառ. սաժ., 4) Պարալանդի ցէմէնտ մաս 1000 պուլ, 5) կտուր մաս 200 պուլ, 6) մաս 300 ջառ. սաժ. կտուր ծածկելու աշխատանք և տուր աշխատանք մաս 1800 ջառ. սաժէն:

Թիված նիւթերի մատակարարութեան մասնաւոր պայմանները կարելի է տեսնել ամեն օր Մասնաժողովի գործաւարի մաս (Սուղբենայա փողոց, տուն № 10, բնակ. 7): Միջոցառում մասնակցել ցանկացող անձինք պէտք է ունենան վկայականներ իրանց անձնագրութեան մասին կամ անցագրի և ներկայացնեն գրաւական ոչ պակաս քան իրանց յայտարարած գների 10%-ը: Գրաւականները կարող են լինել առեւտրային գրաւ կամ տոկոսաբեր թղթեր, որոնք ընդունվում են արքունի կապաների կամ մատակարարութեան համար:

1—3

Այս օրվանից ընդունում են պատուէրներ ԴԱՆԱԿՈՉՎԱՆ ՄԵՆԴՐԻ

ՓԵՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արհեստական հաց (ВОШНА), մաքուր մոմից, ֆուսուր մէկ ռուբլի, ճանապարհածախսը գնողի վրա: Ցանկացողները կարող են դիմել մեզ, որոշելով հացի չափերը:

Վաճարապատ, Ալեքսանդր Մ. Բընուր 4—4

50,000

Ճառեր փշտաբեր անտառի, եղևնի և չոճի, վեց վերջով և աւելի, արվում են կտրելու իշխանութիւնը: Մարտի Իսթիֆաիլա Զալախովայի կառավարութեան կարողութեամբ գտնվում է Անդրկովկասեան երկաթուղու Գրակալի կայարանից տան և հինգ վերստ հեռավորութեան վրա: Բացի արանից կառավարում կան և ուրիշ տեսակի ծառեր—չինար, կաղնի, բոխի, աճառի և կեչի: Տեղեկութիւններ ստանալու համար խնդրում են դիմել իշխանութիւնի Զալախովային—Сед. Ховле, Гориского уезда, Тифлисе, гуд. և Карсы, вназю П. Жавახову. 15—20

Մամուլի տակ են և շուտով լոյս կը տեսնեն

ՅԱՐ. ԹՈՒԹԱՆԻԱՆՏԻ (Դրիմի)

հետեւալ աշխատասիրութիւնները

1) ՄԵԼԻՔՆԱՆԱՆՆԱՆ ՍՈՒՈՒԱՆ (Դրիմի բարբառով) Գիրք է 20 կ.

2) ՓՈՒՍԿԱՆԻՆԻՆԵՐԸ—Գիրք է 15 կ.

3) ՄԻՒ ԼԱՐ... բովանդակութեան ձայնագրութեամբ Գիրք է 60 կոպ.

Տպագրութեան համար պատրաստ է Դուրեանի «ԻՄ ՄԱՀԸ» բովանդակ:

Հեղինակի հասցէն Գ. Асхабать, А. М. Туманяну. 8—3

Թիֆլիսի Առեւտրական Ուսումնարանի չինու-թեան մէջ

Վարձով է տրվում

Մ Ի Մ Ե Շ Ն Կ Ո Ւ Ղ

որ կարող է ծառայել որպէս ապրանքների պահեստ. յատակի տարածութիւնը մօտաւորապէս 175 ջառ. սաժէն է: Տեղեկութիւններ ստանալու համար դիմել ուսումնարանի գրաւատուներ:

2—3

ՆՈՐԱՐԱՆ ԼՈՒՍՏԵՊ ԳՈՐԾԱՐԱՆ


Ս. ՍՈՐՈՍՈՆԵԱՆԻ

Ընդունում է պատուէրներ սովորական գնե-րով: Նոյն տեղից կարելի է ստանալ հալկա-կան գործիչների տիպերի և տեսարանների պատկերներ և ձեռնարկ պայմաններով:

Դիմել Թիֆլիս, ֆոտոտիպ С. Согом-нянца, Базарная, № 23. 2—3

Շ Ղ Թ Ա Յ

ՆԱԽԱՐԴԻՆԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է ընկերութեան պ. պ. բաժնետէրերին արտակարգ ընդհանուր ժողովի, որը տեղի է ունենալու ռաբաթ օր, ներկայ ապրիլի 11-ին, երեկոյեան ժամի 7-ին, քաղաքային տան գաղտնութեան, քանի որ վարչու-թեան և օժանդակ յանձնաժողովի ընկերութեան անպաշտ գործունէութեան վե-րաբերելու (2, 11 ապր.) 1—2



ԳԵՂԵՏԻԿ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՒ ՁԵՆՏՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՔ ՏԱԼԻՍ ԳՆԵԼ ՏԻԿԻՆՆԵՐԻՆ և ՕՐԻՈՐՆԵՐԻՆ
Մաքուր, 56 պարթի ոսկուց—1) Մ ան և ա կ ո ս կ ե ա յ, որի վրա արհեստական աղամանները շրջապատում են զմրուխտ, սապֆիր և փիրուզ անիւներ: 2) մ ի գ ո յ գ խ ո շ ո Ր օ ղ ե Ր՝ ու-ոսկեայ, նոյն ձևի, 3 ո ս կ ե ա յ մ ա տ ա ն ի, նոյն ձևի: Ուղարկ-վում են վերադարձի վճարով, առանց գրաւականի, ու թ Ր ո լ լ ո վ: Այս ամենի հետ եթէ գտնվի նաև անպահանջան՝ այն ժամանակ ըո-րրը միասին կարժեայ 15 ռուբլի:
Հասցէն. Одесса, Торговому Дому Шамиссо и Кº. 1—1

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ

ԵՐԿԵԱՐԱԹԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ

1903—4 շրջանի համար

Իբրև յաւելում, բաժանորդները կը ստանան ձ Ր ի 4-ից մինչև 6 պատկերազարդ գրքիկներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ Է 2 Ր. 50 Կ. (ԱՐՏԱՄԱՀՄԱՆՈՒՄ—10 ՅՐԱՆԿ)

Կարելի է վճարել և մաս-մաս. սկզբում 1 Ր. 50 կ., յունվարին 1 Ր.: Հրատարակութիւնը սկսվելու է անպատեմբերին: Տարեշրջանը սկսվելու էր անպատեմբերին է: Աշխատակցում են շատ հայ բժիկներ թէ Խուսառանում և թէ Թիֆլիսում ու Պարսկաստանում:

Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել Թերթին խմբագրատունը (Сөргіөвская ул., № 12.—Սերգիւսիական փող. № 12), կամ «Դուստնիսեթ» «Гуттенберг» գրա-վաճառանոց:

ԲԱԳԻՈՒՄ գրվել «Պրոմէթէոս» գրաւաճառանոցում (Товарищество «Прометей» — Баку): Պարսկաստանում դիմել Դր. Փաշայեանին (Թաւրիզ):
Հասցէն. Тифлисе. Редакция „Арогджапакъ Тергъ“:
Արտասահմանից. Tiflis, Rédaction „Arogdjarahik Tert“:
3—10 Խմբագիր հրատարակիչ՝ Ժ. Վ. Արծրունի

ՆԵՐԱԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ

(INJECTION AU MATICO)

Գրիմո և ընկ գեղադրոյնների թոյլ է տրված Ռուսաս-տանում: Այս հեղուկի մէջ շահագործված են պերուա-նեան Մատիկո բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէլը (սերմնաթա-փուլիւն) և մի քանի տարվայ ընթացքում համաշ-խարհային հռչակ է ստացել: Ծարձ ժամանակում բու-ժում է ամենազորեղ սերմնաթափութիւնները:
Պարիզ, 8 Rue Vivienne և գլխավոր գեղատնտերում:
(2, 17) 7—24

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺՆԵԳՐՈՒԹԻՒՆ „ԲԱՆԲԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍԻՒՄ“

պատկերազարդ հանդիսի, որ այս տարվանից կը սկսի հրատարակվել Ս. Պետերբուրգում: Հանգէլը լոյս կը տեսնէ տարին երկու անգամ, ծաւալով իւրաքանչիւր գիրքը 20—25 տպա-գրական թերթի, բովանդակութեամբ հարկաւ կարելոյն չափ, ճոխ և չքեղ: Առաջին գիրքը ե-րևան կը գայ յունիսի վերջերին, միանգամայն անկախ բաժնագրութեան հետեանիցի:

Հրատարակում ենք և խնդրում ենք հայ հեղինակների մասնակցութիւնը. Տպագրական թերթը 20 ռուբլի: Բաժնեգիրն երեք (3) ռուբլի: Արտասահման տարը (10) ֆրանկ:

Հանդէս կը խմբագրէ Ն. Աղոնց
Մեր հասցէն. Невский просп., 55, А. Меликянцъ, С.-Петербургъ. 3—5

„Ն. Ի. ԲՈԶԱՐՁԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՒՔ“

Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Տ Ա Ն

ԾԽԱՆՈՒՄԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

(ՈՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ 1858 ԹՈՒԱԿԱՆԻՑՅՈՒՅԼԻՍՈՒՄ)

ՆՈՐԻՑ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՅՆՈՒՄ Է

իր արտադրած ծխախոտը գործածող մեծաքանակ հատարակութեանը, և խնդրում է, աչ-քի առաջ ունենալով իր սշանադրերի (էտիկէտների) շարունակ կրկնվող կ ե ղ ծ ու մ ը, ն ա մ ա ն ա լ ա Ն զ

№ 8
10 Հ. ԱՐԺԷ 5 ԿՕԳ.

№ 15 «ՍԻՄՊԱՏԻԱ»
10 Հ. ԱՐԺԷ 5 Կ.

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՆԵԼ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆԻ ՎՐԱ

ԽԱՆՈՒԹԻ

Հեռ-ԱնՈՍ № 181.

ԳՈՐԾԱՐԱՆԻ

Հեռ-ԱնՈՍ № 100.

(Կիր. չոր.) 4—10